ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԺԳ

ՀՈՎՎԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԸ

Armenian Church Library http://hygradaran.weebly.com

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԺԳ

ՀՈՎՎԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԸ

Պատրաստվել է Մոսկվայի Սուրբ Տիխոնի
անվան ուղղափառ համալսարանի կողմից

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Հ - 883

Տպագրվում է հրատարակչության
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական Խորհրդի

Թարգմանեց՝
Տ. Պարթև արեղա Բարսեղյանը
Խմբագիր՝ Տ. Տաճատ արեղա Ծատուրյան
Սրբագրիչ՝ Յուրա Հովհաննիսյան

Հովվի տկարություններն ու աստվածային շնորհը:
Հ 883 Ռուսերենից թարգմանեց Տ. Պարթև աբեղա Բարսեղյանը; խմբ.՝ Տ. Տաճատ աբեղա Ծատուրյան – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010.– 44 էջ:

Այս փոքրիկ գրքույկը, այն մասին է, թե արդյոք գործո՞ւմ է Աստվածային շնորհն անարժան քահանաների միջոցով, երբ նրանք որևէ ծես կամ խորհուրդ են կատարում:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-069-1 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010 թ.

ԵՐԿՈՒԽՈՍՔ

«Հովվի տկարությունները և աստվածային շնորհը» գրքույկը պատրաստվել է Մոսկվայի Սուրբ Տիխոնի անվան համալսարանում և պատմում է ուղղափառների և աղանդավորների միջև ծավալված մի զրույցի մասին:

Զրույցը խորհուրդների ժամանակ եկեղեցու հովիվների միջոցով բաշխվող աստվածային շնորհի շուրջ է, կարևոր և արդիական մի նյութ, որը կարծում ենք կհետաքրքրի ընթերցողին: Հատկապես մեր օրերում, երբ աղանդավորներն իրենց մարդորսական «առաքելության» ճանապարհին՝ դիմում են բոլոր հնարավոր միջոցների և, քննադատության թիրախ դարձնելով անգամ եկեղեցու սպասավորներին, պնդում են, որ մեղավոր եկեղեցականի կատարած խորհուրդների միջոցով աստվածային շնորհը չի փոխանցվում հավատացյալին:

Ուղղափառ եկեղեցականները՝ մեջբերելով աստվածաշնչային տեղիներ և եկեղեցական Հայրերի

վկայություններ, ապացուցում են աղանդավորական գաղափարների անհեթեթությունը և հիմնավորում, որ աստվածային շնորհը հավատացյալ մարդուն միշտ տրվում է նրա հավատքի չափով, անկախ այն բանից, խորհրդակատար հովիվն արժանավո՞ր է, թե՞ անարժան:

Հուսով ենք, որ գրքույկն իր օգտակարությունը կբերի յուրաքանչյուր հավատացյալ հայորդու՝ առավել չափով գաղափար ունենալու աստվածային շնորհի վերաբերյալ և մերժելու աղանդավորական թյուր կարծիքները:

ՀՈՎՎԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԸ

(Այն մասին, թե արդյոք գործո՞ւմ է Աստվածային շնորհն անարժան քահանաների միջոցով)

Աղանդավորությամբ խիստ վարակված մի վայրում ուղղափառների և աղանդավորների միջև զրույց էր տեղի ունենում խորհուրդների ժամանակ եկեղեցու հովիվների միջոցով բաշխվող շնորհի շուրջը:

Քահանան ասում էր. *— «Մարդն ինքը մենակ, առանց վերին շնորհաբաշխ օգնության, չի կարող առ Աստված բարձրանալ: Մարդու մեջ դրա համար անհրաժեշտ ուժեր կան, սակայն դրանք բացահայտված չեն և ինքնուրույն բացահայտվել չեն կարող: Մարդու հոգին ցորենի հատիկ է: Նրան մեջ կենարար ուժ կա, որպեսզի աճի, բայց հնա-*

ռավոր է, որ այդ ուժը երբեք էլ ի հայտ չգա: Ամենու համար ցորենին անհրաժեշտ է պարարտ հող, խոնավություն, արևի լույս ու ջերմություն: Եթե ցորենի հատիկն այդ ամենը չգտնի՝ պտուղ չի տա, ի հայտ չի բերի թաքնված կենարար ուժը, անշարժ ընկած կմնա և, հնարավոր է, որ փտի: Քնության բարենպաստ ուժերը գոյություն ունեն, դրանք միշտ պատրաստ են ծառայելու ցորենի հատիկին, բայց քանի դեռ ցորենի հատիկը ենթակա չէ այդ ուժերի ազդեցության, այն չի կարող ապրել, այն միայն գոյություն ունի որպես մի մեռած, անկենդան մի բան:

Այդպես է նաև մարդը և շնորհի գործությունը: Աստծո շնորհաբաշխ գործության լույսն ու ջերմությունը մարդու հոգու մեջ արթնացնում են կենդանի կյանքը, զարթնեցնում են թաքնված ուժերը, գործացնում նրա հոգևոր ներուժը: Ուրեմն, ձգտե՛ք շնորհին, փնտրե՛ք այն, ձեռք բերե՛ք այն: Շնորհն ուղղափառ եկեղեցու սուրբ խորհուրդների միջոցով առատորեն բաշխվում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են այն, ովքեր համառորեն ձգտում են, ովքեր արժանի են նրան»:

Այսպես էր ասում մի պատկառելի հովիվ՝ ալեհեր, բազմամյա փորձառությամբ իմաստնացած և Աստծո խորհրդաստ խոսքով լուսավորված: Նրա խոսքը սահուն էր, և բոլորը չունչները պահած, ուշադիր լսում էին նրան: Միայն աղանդավորներն էին երբեմն չչնջում միմյանց հետ:

Այդ կրոնական հերձվածողներն ի վերջո չդիմացան, սկսեցին աղմկել և անհանգստանալ: Նրանցից մեկը ոտքի կանգնեց և սկսեց հակառակվել: Նա ասում էր. *«Մենք հավատում ենք, որ մարդն առանց շնորհի չի կարող ապրել: Հավատում ենք նաև, որ այն տրվում է Քրիստոսին հավատացող ամեն մի մարդու: Չենք հավատում, սակայն, որ Աստծո շնորհը ձեր խորհուրդների ժամանակ տրվում է ձեր միջնորդությամբ: Դուք, իհարկե, ինձ կհարցնեք՝ ինչո՞ւ: Պատասխանի համար պետք չէ շատ հեռու գնալ: Նայեցեք ձեր միաբան եղբայրներին: Ասե՛ք, մի՞թե նրանք համապատասխանում են իրենց կոչումին, արդյոք բա՞ռն են պահում իրենց դրոշը»:*

Աղանդավորն իր խոսքն սկսեց այս սովորական ծեծված խոսքով, որոնք գործնական ու հիմնարար ապացույցների փոխարեն հաճախ էին կրկնում ուղղափառների հետ զրույցներում, թե իբր շնորհը տրվում է միայն արժանավորներին և արժանավորների միջոցով. սրբությունը՝ սուրբերին»:

Երբ աղանդավոր ճարտասանն ավարտեց իր խոսքը, նստեց իր տեղում և, ըստ երևույթին, գոհ էր իր թողած տպավորությունից: Աղանդավորներն ուրախանում և հրճվում էին՝ հավանություն տվող հայացքներով նայելով իրենց առաջամարտիկին: Ուղղափառության պաշտպանը տխրությամբ էր հետևում աղանդավորների մտքի ուղղությանը և խորհում էր. «Տե՛ր Ատված, մինչև ուր են հասել եղծարարները: Իրենց հպարտությամբ և թվացյալ սրբությամբ կուրացած՝ նրանք չեն նկատում սեփական աչքի գերանը և կարծում են, որ շնորհը միայն իրենց է տրվում, որ Քրիստոսի շնորհը բաշխվում է միայն իրենց՝ հաճախ նաև անարժան «երեցների» միջոցով: Մյ, եթե նրանք եւր կանգնեին իրենց կոպիտ սխալից և դադարեին իրենք իրենց նայել որպես սուրբերի, այն ժամանակ նրանք, անկասկած, կհրաժարվեին տվյալ հարցի վերաբերյալ արտահայտած իրենց խոսքերից ու գաղափարներից և ամբողջովին կտրոգորվեին այն համոզմունքով, որ Ատվածային շնորհը տրվում է յուրաքանչյուր հավատացյալի, անկախ այն բանից, թե այս կամ այն խորհուրդը կատարող քահանան արժանավո՞ր է, թե՞ անարժան»:

Ուղղափառները, սակայն, հաստատ համոզված են, որ շնորհն ի վերուստ տրվում է ամեն մի հովվի միջոցով՝ լինի արժանավոր թե անարժան:

Սակայն որքան մեծ եղավ մեր զարմանքն ու հիասթափությունը, երբ հիշյալ զրույցից տասն օր անց մի գրքից իմացանք՝ միայն աղանդավորները չէ, որ մեղավոր են մեր չոշափած հարցի սխալ լուսաբանման մեջ, այլև նրանց հետ միանգամայն համակարծիքի են նաև սուրբ խորհուրդները ճանաչողները և Քրիստոսի՝ դրանց միջոցով բաշխվող փրկարար շնորհին հավատացողները:

Այդպիսիներից է, օրինակ՝ Ի. Սմիրնովը, այն կրոնական կերպարներից մեկը, ում իր «Աստծուն փնտրողները» գրքի երկրորդ մասում (Մոսկվա, 1911 թ.) պատկերել է հայտնի հրապարակախոս Ա. Ս. Պանկրատովը:

Հեղինակը պատմում է, որ Սմիրնովն ապրեց 60 տարի: Կյանքի վերջում նրա մոտ տարօրինակ վերաբերմունք առաջացավ բոլոր մարդկանց և ամբողջ աշխարհի հանդեպ:«Բոլորն ապրում ևն ոչ քրիստոնեավայել, - ասում էր նա,- հավատքը կորչել է»: Իր մասին կարծում էր, որ ինքն ավելի մոտ է Աստծուն, քան մեկ ուրիշը, քանի որ ապրում է ճշմարիտ հավատի խստությամբ ու մաքրությամբ: Մյուս բոլոր «հավատները» հերետիկոսություններ են:

Եվ երբ նա զգաց իր մոտալուտ վախճանը, սկսեց մտածել. «Անհրաժեշտ է խոստովանել: Սակայն, ո՛ւմ, գերեզմանատան տեր հո՛ղը»: Սակայն հայրերից և ոչ մեկը հայրական սրբություն չունի: Ինքը պետք է խոստովանի մի այնպիսի մեկի, ով իր բարոյականությամբ իրենից ավելի մաքուր լինի, կամ, նվազագույն դեպքում այդ առումով հավասար լինի իրեն: Այլապես խոստովանությունն անվավեր կլինի:«Եթե ևս կաթ չեմ ճաշակում, ուրեմն, ում որ պետք է խոստովանեմ, նա նույնպես չպետք է ճաշակի, այնինչ բոլորը ճաշակում ևն՝ չկասկածելով, որ այն սիրդ է...»:

Երբ Ֆյոդոր Իվանովիչը պառկած էր մահվան մահճում, նրան ասացին.

– Հայր, արդյոք դու չե՞ս մոռացել խոստովանել:

Նա հանդիստ պատասխանեց.

– Ո՛ւմ խոստովանեմ: Չեմ տեսնում մի մարդու, ով արժանի լինի իմ խոստովանությունն ընդունելու:

Իր դստերը պատվիրել էր. «Ինձ կթաղես առանց քրիստոնեական արարողակարգի, քանի որ աշխարհում չկար այն մարդը, ով կկարողանար նրան պատրաստել Երկնային Արքայության համար:

Կարծում ենք, որ միայն Սմիրնովը չի այսպես մահացել՝ առանց խոստովանության և չհավատալով, որ չնորհը կարող է բաշխվել նաև անարժան հովիվների միջոցով: Աշխարհում այդպիսի Սմիրնովներ շատ կան: Իզուր չէ, որ

տեր հորն «ընտրում են»: Բոլորը փնտրում են ալևոր, աստվածավախ, ջերմեռանդ հավատացյալ քահանայի, ով անկեղծորեն նվիրված լինի իր սուրբ գործին: Եթե նման մեկին մոտակայքում չեն գտնում, ապա գնում են վանքերում փնտրելու: Ի վերջո, կգտնեն նրան, նրա առջև կխոնարհեն իրենց հպարտ գլուխը, կհավատան նրա կատարած խորհրդի փրկարարությանն ու վավերականությանը: Իսկ անփուլթ, անպարկեշտ և մեղավոր հովվից, գրեթե բոլորը խորշում են: Անգամ գյուղացիներն են խուսափում նրանից, դժկամությամբ են գնում նրա մոտ և, հնարավորության դեպքում, նախընտրում են հարևան ավելի անբասիր և պարկեշտ քահանային:

Այսպիսով մեր կողմից արծարծվող խնդիրը մեծավ մասամբ ստանում է բացասական լուծում: Եթե ոչ տեսականորեն, ապա գործնականում, և եթե ոչ խոսքով, ապա, ծայրահեղ դեպքում՝ գործերով:

Նկատի ունենալով ժամանակակից հասարակության մեջ գոյություն ունեցող այս տեսակ մտայնությունը, ինչպես նաև անարժան քահանաների նկատմամբ այսպիսի անվստահ վերաբերմունքը և, վերջապես, հաշվի առնելով նրանց կողմից կատարվող խորհուրդների վավերականության հանդեպ առկա անվստահությունը՝ ձեռնամուխ կլինենք նշյալ խնդրի հնարավորինս ամբողջական և հիմնավոր քննությանն ու ուսումնասիրությանը:

Ի վերջո, Աստվածային շնորհը գործո՞ւմ է արդյոք եկեղեցու անարժան հովիվների միջոցով:

«Այո՛, գործում է», – պատասխանում ենք մենք հաստատապես, համոզված կերպով, դույզնինչ չկասկածելով և չտատամսելով: Եվ այդպես ենք մտածում հետևյալ պատճառով:

Աղանդավորներն ասում են՝ «Սրբությունը՝ սուրբերին», այսինքն՝ Աստվածային շնորհը տրվում է միայն ընտրյալներին, սուրբերին: Բայց չէ՞ որ բառիս բուն իմաստով սուրբեր չեն եղել, չկան և չեն էլ լինի: Բոլոր մարդիկ էլ մեղանչական են, բոլորն էլ Աստծո առջև մաղավոր են: Այս ճշմարտությունը վկայել է դեռևս

Ժողովողը. երբ ասել է. «Երկրի վրա չկա արդար մի մարդ, որ բարի գործ անի և չմեղանչի» (Ժող. 7:21):

Նոր Կտակարանում նույնն է գրում նաև Հովհաննես Ավետարանիչը: Ահա նրա խոսքերը.

«Եթե ասենք՝ «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ» (Ա Հովհ., 1:8): ***Այսպես է ասում նաև Հակոբոս առաքյալը.*** *«Բոլորս էլ շատ ենք մեղանչում» (Հակ. 3:2):*

Նույնիսկ առաքյալները, մարգարեները, արդար այրերը, հինկտակարանյան նախահայրերը, նրանք էլ հեռու չէին մեղքից, նրանք էլ երկմտեցին, սայթաքեցին, ուրացան Քրիստոսին՝ ժամանակ առ ժամանակ բռնվելով կրքերով և շատ ուրիշ թուլություններով ու մեղքերով:

Այսպես, հավատքով ամուր և աստվածատես Մովսեսն ինքը երբեմն ընկնում էր թերահավատության մեջ՝ դառնալով նույնիսկ դրա զոհը *(Թվեր 20: 1-12):*

Աբրահամ Հոբը, չկարողանալով պայքարել փորձություններուի դեմ, անտանելի բորոտության սարսափելի չարչարանքների ժամանակ անիծեց իր ծննդյան և սաղմնավորման օրը *(Հոբ 3: 1-2):*

Դավիթը Մարգարե և թագավոր, մեղավոր էր քեռացի Ուրիայի մահվան մեջ, նրա կնոջ հետ չնացավ, համաժողովրդական մարդահամարից հետո հպարտացավ իր թագավորության հզորությամբ, շատ մարդկային արյուն թափեց, որի համար էլ զրկվեց Տիրոջ տաճարի կառուցողը լինելու պատվից *(Բ Թագ. 12: 1-17, 24: 1-16):*

Պետրոս առաքյալը երեք անգամ ուրացավ Քրիստոսին՝ իր Տիրոջը *(Մատթ. 26: 9-75):* ***Իսկ Սուրբ Պողոսը՝ չնորհի այդ ամենամաքուր անոթը, իր մասին ասում է.***

«Որովհետև ոչ թե անում եմ բարին, որ կամենում եմ, այլ գործում եմ չարը, որ չեմ կամենում» (Հռոմ. 7:19):

Ուրեմն եթե հավատի այուներն են ժամանակ առ ժամանակ տատամսել, եթե արդար մարդկանց հոգիներն են երբեմն փոթորկվել

մեղավոր մտքերով, կասկածներով, փոքրոգությամբ ու թուլություններով, մի՞թե հնարավոր է, որ թուլություններ և արատներ չլինեն ուղղափառ հովիվների սրտերում: Զէ՞ որ նրանք հրեշտակներ չեն: Նրանք պարզ, սովորական մարդիկ են՝ մեղավոր հակումներին ենթակա այնքանով ու այն չափով, որքանով որ ենթակա է ողջ մարդկությունն ընդհանրապես:

Այդ դեպքում ինչպե՞ս կարելի է նրանցից կատարյալ սրբություն և անթերի մաքրություն պահանջել: Եթե հենց Իր՝ Քրիստոսի իսկ ընտրած առաքյալներից մեկը բացարձակ անարժան գտնվեց, ինչպես օրինակ՝ Հուդան, մյուսը՝ Քրիստոսին ուրացող, իսկ երրորդը՝ «մեղքի գերի» (Հռոմ. 7:23), ապա զարմանալու ի՞նչ կա, որ տասնյակ հազարավոր ուղղափառ քահանաների մեջ երբեմն հանդիպում են անարժան հովիվներ, ովքեր չեն համապատասխանում ո՛չ ավետարանական ուսմունքի ոգուն, ո՛չ էլ առաքելական պատգամների պահանջներին:

Զարմանալու բան այստեղ, իհարկե, չկա, ասում են մեզ կեղծարար մկրտչականները: Սակայն ահա թե որն է հարցը.

«Ավետվածային շնորհն արդյոք գործո՞ւմ է այդպիսի անարժանների միջոցով»:

Մենք դրանում չատ խիստ կասկածում ենք: Իմիջիայլոց, դա մեր կռահումն ու ենթադրությունը չէ, այլ՝ Սուրբ Գրքերով հիմնավորված եզրակացություն: Վերցրեք Գործք առաքելոցը, այնտեղ՝ 8-րդ գլխում, դուք կգտնեք հետևյալը.

«Սիմոնը տեսնելով, թե առաքյալների ձեռք դնելով Սուրբ Հոգին տրվում է, փող տվեց ու ասաց. «Ինձ էլ տվեք այս իշխանությունը, որպեսզի ում վրա որ ձեռքս դնեմ, Սուրբ Հոգին ստանա»: Պետրոսը նրան ասաց. «Քո արծաթը թող քեզ հետ կորչի, քանի որ կարծեցիր, թե Աստծու պարգևները կարելի է փողով ստանալ, դու այդ բանում մաս և բաժին չունես, քանի որ քո սիրտը Աստծու առաջ ուղիղ չէ» (18:21):

«Դու այդ բանում մաս և բաժին չունես, քանի որ քո սիրտը Աստծու առաջ ուղիղ չէ». աղանդավորները այս խոսքը մեկնաբանում են այն իմաս-

տով, որ Աստվածային շնորհը չի կարող տրվել մի մարդու միջոցով, ում խիղճը մաքուր չէ:

Մենք՝ ուղղափառներս, համաձայն չենք աղանդավորների այս տեսակ փաստարկների հետ: Մենք համամիտ չենք նրանց տեսակետին: Մենք խորապես համոզված ենք, որ աստվածային փրկարար շնորհը նույնությամբ տրվում է ինչպես արժանավոր, այնպես էլ անարժան քահանաների միջոցով, ինչպես սուրբերի, այնպես էլ մեղավորների, ինչպես իմաստունների, այնպես էլ սովորական մարդկանց միջոցով: Եվ մեր հավատն այս պարագային կույր, անտրամաբանական, անհիմն և առանց ապացույցների չէ, այլ գիտակցված հավատ է, որն իր համար բավարար հենարան է գտնում վճռապես ամեն ինչում՝ և՛ Սուրբ Գրքում, և՛ պատմության մեջ, և՛ առողջ բանականության մեջ:

Անդրադառնանք սկզբից Սուրբ Գրքին: Գրեթե յուրաքանչյուր սրբազան գրքում կան օրինակներ, երբ Աստվածային շնորհը տրվում է ոչ միայն արժանավոր, այլև անարժան անձերի միջոցով: Հիշենք, օրինակի համար, Բաղաամ մոգին: Չէ՞ որ նա սրբապիղծ, եսասեր և շահամոլ մոգ էր: Նա, ագահությունից դրդված, գնաց մովաբացիների Բաղակ արքայի մոտ՝ անիծելու Իսրայելի ժողովրդին: Նրան գայթակղում էին հարուստ նվերները, որոնք ուղարկվել էին նրան գթաշարժելու, մովաբացիներին օրհնելու, իսկ իսրայելացիներին նզովելու համար: Սակայն, երբ նա Տիրոջ հրահանգով հրեա ժողովրդին նզովելու փոխարեն օրհնեց, ափսոսաց, որ չկատարելով Բաղակի ցանկությունը՝ նրանից չի ստանա խոստացված ընծաները, և նա իսրայելացիների համար կործանարար խորհուրդ տվեց թագավորին. նրանց ամեն կերպ գայթակղել և մղել կռապաշտության և անառակության (Թվեր 23:6):

Հարց է առաջանում, չ՞նչը կարող է ավելի նողկալի և ատելի լինել, քան մոգի այս արարքը: Սակայն, Աստված անգամ նրա միջոցով հոգևոր օրհնություն տվեց անչնորհակալ հուդայացիներին և նրա բերանով, ի լուր բոլոր հավաքվածների, ազդարարեց Քրիստոսի հայտնության մարգարեությունը:

Այսպիսով, ահա առաջին օրինակն այն բանի, որ անարժան և մեղավոր մարդու միջոցով Աստված տալիս է և՛ չնորհ, և՛ մարգարեություն, և՛ օրհնություն:

Հիշենք նաև պիղծ Հուդա Իսկարիովտացուն. մի՞թե նա հրաշքներ չէր կատարում (Մատթ. 10: 1-9), մի՞թե նրա միջոցով Աստված չէր հայտնում Իր չնորհները: Սակայն նա Քրիստոսին մատնողն էր, գող և սատանա: Համենայն դեպս, այդ մասին այդպես է ասում Հովհաննես ավետարանիչը (Հովհ. 12: 5-6): Իսկ Քրիստոսը Փրկիչն Իր մոլորված աշակերտին բնութագրեց «սատանա» բառով: «Չէ՞ որ ես եմ ընտրել ձեզ՝ Տասներկուսիդ»,– ասում է Հիսուս Քրիստոս,– սակայն ձեզանից մեկը սատանա է» (Հովհ. 6:71):

Իսկ Կայիափա քահանայապե՞տը: Չէ՞ որ նա էր հետամտում Քրիստոսի մահը, դատապարտեց Նրան և չարչարանքների մատնեց: Հետևաբար, աստվածային և մարդկային օրենքներով նա քահանայական պաշտոնին արժանի չէր: Աստված, սակայն, խոսում էր նրա միջոցով՝ մարգարեության չնորհ տալով նրան:

Օրինակի համար մենք գիտենք, որ նա կանխատեսեց Քրիստոսի մահը ոչ թե իր սեփական մեղքերի, այլ մարդկանց մեղքերի համար, ինչպես այդ մասին վկայում է սուրբ Հովհաննեսը.

«Դուք ոչինչ չգիտեք, ոչ իսկ խորհել եք, թե մեզ համար ավելի լավ է, որ մեկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թե ամբողջ ազգը կորչի» (Հովհ. 11: 50-51):

Վերցնենք նաև Աբիմելեքի օրինակը: Նա նույնպես մեղավոր էր, բազմիցս բարկացրել էր Աստծուն և ընկել կռապաշտության մեջ: Զնայած դրան, նա, ի վերջո, արժանացավ աստվածային հայտնության: Նրան ի վերուստ տրված էր իմանալ, որ Աբրահամը մարգարե է (Ծննդ. 20:7): Այլ կերպ ասած՝ նա ինքը՝ այդ մեղավոր հեթանոս թագավորը, նույնպես արժանացավ դերբնական աստվածային չնորհին:

Իսկ Դավիթ թագավո՞րը: Որքա՜ն հանցանքներ նա գործեց: Որքա՜ն մարդկային արյուն հեղեց, որքա՜ն հաճախ էր ընկնում չնության մեղքի մեջ, որքա՜ն հաճախ էր նրան տիրում հպարտության և անափառության ոգին, և որ-

քա՛ն հաճախ էր նա խախտում Արարչի պատվիրանները: Եվ, չնայած այդ ամենին, աստվածային շնորհը նրան ավելի էր տրվում, քան տասներկու փոքր մարգարեներից որևէ մեկին: Նա մեծ մարգարե էր և Աստծո շնորհի մեծագույն անոթ:

Թովմաս առաքյալը չէր հավատում Քրիստոսի հարությանը, սակայն դրա համար աստվածային շնորհից չզրկվեց:

Այսպիսի տեղեր և օրինակներ շատ ու շատ են Աստծո խոսքում, և այս օրինակները բոլորին և ամեն մեկին առանձին-առանձին համոզում են, որ աստվածային շնորհը հաճախ է տրվում մեղավորներին, արատավորներին, ուրեմն նաև՝ անարժան անձանց: Եվ եթե այսպես է, իսկ բերված օրինակներից հետո դրանում կասկածել այլևս անկարելի է, ուրեմն աստվածային շնորհը կարող է տրվել նաև անարժան ուղղափառ քահանաների միջոցով, ինչպես սուրբ Մյուռոնն է լցվում և անցնում անմաքուր անոթների միջով:

Մեր կատարած եզրահանգման անուղղակի ապացույցներին ենք հանդիպում նաև Պողոս առաքյալի նամակներում: Պողոս առաքյալն ասում է, որ հավատացյալներին շնորհաբաշխ ուժ պարգևելու՝ եկեղեցու հովիվների իշխանությունն ու իրավունքն Աստծուց է բխում.

«Այսպիսի մի վստահություն ունենք առ Աստված՝ Քրիստոսի միջոցով, մենք աներամբ մեզնից որևէ բան խորհելու կարող չենք, այլ Աստծուց է մեր կարողությունը, որը և կարող դարձրեց մեզ նոր Ուխտի պաշտոնյաներ լինելու» (Բ Կորնթ. 3: 4-7):

«Այսուհետև այս գանձերն ունենք կավե ամանների մեջ, որպեսզի զորության գերազանցությունը Աստծուց լինի և ոչ մեզնից» (Բ Կորնթ. 4:7):

«Իմ շնորհը քեզ բավ է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է ամբողջական դառնում» (Բ Կորնթ. 12:9):

Ուրեմն, եթե աստվածային իմաստությունը հայտնվում է ոչ թե իմաստուններին, այլ մանուկներին, եթե աստվածային զորությունը տկարության մեջ է ամբողջանում, և եթե աստվածային շնորհը կավե ամանների մեջ էլ

է հայտնվում, ապա ավելի քան պարզ է, որ կարող է տրվել նաև անարժան հովիվների մի-ջոցով աստվածային չնորհը, քանի որ սուրբ առաքյալի այնպիսի արտահայտությունները, ինչպիսիք են՝ «տկարության մեջ է ամբողջական դառնում», «կավե անամաններ», կարող են վերա-բերել միայն անարժան, այլ և ոչ երբեք բարի, խելացի և արժանավոր հովիվներին:

Եվ այսպես Ուղղափառ Եկեղեցին հաստա-տում է, որ աստվածային չնորհն իր ամբողջ ուժով կարող է նաև արտահայտվել անարժան քահանայի միջոցով: Ինչո՞ւ է այդպես: Որով-հետև, պատասխանում ենք մենք, որոշակի պահերի այդ չնորհը կարող է իրեն ենթարկել հովվի հոգին, նրան վերափոխել ըստ Քրիստո-սի Հոգու, այդպիսով, նրան ընդունակ դարձ-նելով որպես Քրիստոսի ծառա հանդես գալու համար:

Հիշենք Բաղաամ մարգարեին. նա դրամի հա-մար պատրաստ էր իր մարգարեական չնորհը հեթանոսին վաճառելու և նզովելու Աստծուն հավատարիմ ժողովրդին, այսինքն՝ Իսրայելին:

Բայց ահա նա լեռը բարձրացավ, տեսավ իր առջև տարածված իսրայելացիների վրանները և բանակատեղիի մեջտեղում գտնվող Ուխտի վկայության խորանը ու նրա առջև աղոթող Իս-րայելի ժողովրդին՝ տղամարդկանց, կանանց և երեխաների, ովքեր փրկություն էին աղերսում Աստծուց և Նրա խորանից: Եվ այդ ժամանակ բացվեցին նրա շուրթերը և Աստծո ժողովրդին օրհնություն բաշխեցին նզովքի փոխարեն:

Սխալ կլիներ մտածել, որ աստվածային զորությունը Բաղաամի միջոցով գործեց լոկ միայն մեքենայաբար, այսինքն՝ նրան ստիպեց ասել այն, ինչ որ նա իրականում չէր ցանկա-նում ասել: Այստեղ բանն ամենևին էլ այդ չէ: Դրա պատճառն ավելի խորն է, քան առաջին հայացքից թվում է: Կարծում ենք, որ Բաղաա-մը նզովքի փոխարեն օրհնություն բաշխեց հետևյալ պատճառով. Վկայության խորանից փրկություն աղերսող և Ուխտի Տապանակի առջև ծնկած ժողովուրդը մարգարեի մեջ արթ-նացրեց արդարության ու ճշմարտության ծառայելու ոգի, խղճմտանք՝ հանդեպ ժողո-

վուրդը և նրա փրկության փափագը: Եվ ահա Բաղաամի մեջ բնակվող չնորհը խոսեց նրա բերանով, և նա Իսրայելի վրա իջեցրեց աստվածային օրհնությունն ու չնորհը, չնայած հնարավոր է, որ հաջորդ օրը նա նորից գնաց Բաղակի մոտ՝ աստվածային չնորհը նրան վաճառելու առաջարկով:

Այն, ինչ տեղի ունեցավ Բաղաամի հետ, անկասկած տեղի է ունենում նաև մեր օրերի յուրաքանչյուր անարժան հովվի հետ: Այս միտքը Ուղղափառ Եկեղեցին արտահայտել է հետևյալ պատումի մեջ:

Մարկոս եգիպտացին երեսուն տարի փակված ապրում էր իր խցում: Մոտակայքում ապրող մի քահանա միշտ գնում էր նրա մոտ և Սուրբը Հաղորդություն տանում:

Սատանան, տեսնելով մեծ ճգնավորի այս տեսակ անսասան համբերությունը, մտքին դրեց փորձել նրան: Եվ ի՞նչ արեց նա: Մի դիվահարի միտք տվեց նրա մոտ գնալ՝ իբր թե աղոթելու համար: Զար ոգով բռնվածը, գնալով Երանելի Մարկոսի մոտ, բացականչեց. «Քո երևցը նողկալի արատներ ունի, նրան այլևս թույլ մի՛ պուր քեզ մոտ մտնել»:

Սուրբը նայեց նրան և ասաց. «Զավա՛կս, բոլորն անմաքրություններ դուրս են շպրտում, իսկ դու այն բերել ես ինձ մոտ: Սուրբ Գրքում գրված է. «Մի՛ դատեք, որ չդատվեք» (Մատթ. 5:16): Ի դեպ, եթե քահանան նույնիսկ այդպիսի մեծ մեղավոր է, ինչպես դու ես ասում, ապա Ավետված ամեն դեպքում կփրկի նրան, քանզի գրված է. «Միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք» (Հակոբ. 5:16): Այս խոսքերից հետո սուրբն աղոթեց, դուրս քշեց նրանից դևը և նրան առողջ արձակեց: Իսկ երբ սովորականի պես եկավ երեցը, սուրբը նրան ուրախությամբ ընդունեց: Ամենաբարի Աստված, տեսնելով սուրբի անհիշաչարությունը, նրան հրաշք ցույց տվեց. «Քանզի, երբ քահանան սկսեց հողորդություն տալ, ես տեսա,— պատմում էր սուրբը, որ Ավետո հրեշտակն իջավ երկնքից և ձեռքը դրեց երեցի վրա, և նա դարձավ ինչպես մի հրե սյուն»: Եվ երբ ես զարմանքով նայում էի այդ հայտնությանը, լսեցի մի ձայն, որն ինձ ասում էր. «Ո՛վ մարդ, ինչո՞ւ ես դու այս

բանի վրա զարմանում, եթե երկրավոր թագավորն էլ է իր մեծապոհմիկներին արգելում անմասն ներկայանալ իրեն, այլ բարեվայելչություն է նրանցից պահանջում, ապա առավել ևս աստվածային զորությունն է պահանջում: Մի՞թե այն չի մաքրագործի սուրբ Խորհուրդների պաշտոնյաներին՝ երկնային փառքի առջև կանգնածներին»:

Այսպիսով, քաջեռանդ ճգնավոր Մարկոս եգիպտացին այդ շնորհին արժանացավ այն բանի համար, որ նա չդատապարտեց իր երեցին և նրան չփոխարինեց մեկ ուրիշ, առավել արժանավոր և շնորհարժան քահանայով:

«Լավ,— ընդդիմանում են աղանդավորները,— ահա դուք վստահ եք, որ հովիվը քահանայագործելու պահին լուսավորվում է Քրիստոսի շնորհով, այսպես ասած՝ «սթափվում է», այսինքն՝ տոգորվում է իր անարժանության ծանր և տանջալի գիտակցությամբ, դրա հետևանքով առաջանում է ապաշխարության այն տրամադրությունը, որը սովորաբար իր վրա է իջեցնում Աստծո կենարար շնորհը: Իսկ եթե հովիվը բարոյականությամբ ընկել է այն աստիճան, որ չի կարող բարձրանալ իր անկման անդնդից, մի՞թե կասեք, որ շնորհը գործում է նաև այդպիսիների միջոցով»:

Անկասկած, որովհետև հոգևորականն ինքն իրենով չի գործում. նա ամենից առաջ Քրիստոսի ներկայացուցիչն է: Այնպես որ նրա՝ քահանայի միջոցով խորհուրդները կատարվում են բարձրագույն աստվածային զորությամբ, հենց Իր՝ Քրիստոս Փրկչի իշխանությամբ: Իսկ քահանան, հետևաբար, տվյալ պարագային լոկ վկա է և միջնորդ՝ երկրի և երկնքի, Աստծո և մարդկանց միջև:

Սա մեր կամ էլ առանձին, մասնավոր անձանց կարծիքը չէ, այլ ողջ Ուղղափառ Եկեղեցու ուսմունքն է: Այն իր լավագույն արտահայտությունն է գտել եկեղեցական այն աղոթքներում, որոնք հովիվը կարդում է «Սրբություն Սրբոցը» պատրաստելուց առաջ: Ահա մի հատված այդպիսի աղոթքից.

«Քանզի Քո մոտ եմ գալիս գլուխս խոնարհելով և աղոթում Քեզ, որ երեսդ չդարձնես ինձնից, ոչ էլ Քո որդիներից, չմերժես, այլ արժանի՛ արա, որ մեղավոր և անարժան ծառայիս բերած այս ընծա-

ևորը Քոնը լինեն, որովհետև Դու ևս Ընծայաբերողը և Ընծայարևրվողը, Ընդունողն ու Բաշխողը, Քրիստոս Աստված մեր»:

Նույն միտքն է արտահայտվում նաև քահանայի՝ սուրբը ընծաների փոխակերպման աղոթքում.

«Եվ այս հացը Քո Քրիստոսի պատվական մարմինը դարձրո՛ւ, իսկ այս բաժակի մեջ եղածը՝ Քո Քրիստոսի պատվական արյունը»:

Այսպիսով, սուրբ խորհուրդների փաստացի կատարողը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, իսկ քահանաները ոչ այլ ոք են, եթե ոչ միջնորդներ Աստծո և մարդկանց միջև, որոնց միջոցով էլ տրվում է աստվածային շնորհը, սուրբ խորհուրդների շնորհը: Սուրբ Գիրքը պարզորոշ ասում է, որ աստվածային շնորհը բաշխվում է բոլոր հովիվների միջոցով՝ ինչպես արժանավորների, այնպես էլ անարժանների, և որ նրանց քահանայագործությունը փրկարար է հավատացյալների համար, որովհետև նրանք մատուցում են մի ծառայություն, որը Աստված հաստատել է՝ հավատացյալների վրա Աստծո

շնորհները տարածելու համար, և Աստված իր շնորհով *«բժշկում է անկատարությունը և լցնում դատարկվածը»:*

Տվյալ խնդիրը Սուրբ Գրքից բացի, նույն ոգով և ուղղությամբ է լուծում նաև սրբազան Ավանդությունը: Այսպես, դեռևս առաջին դարից ի վեր քրիստոնեական եկեղեցու հեղինակավոր ներկայացուցիչները հաստատում են նույնը, ինչ որ մենք ենք այսօր պաշտպանում: Ճիշտ է, աղանդավորները սրբազան Ավանդությունը չեն ընդունում որպես հավատի աղբյուր, որի համար էլ անվստահությամբ են վերաբերվում եկեղեցու սուրբ հայրերի և վարդապետների գրվածքներին:

Բայց բոլոր այն աղանդավորները, ովքեր մեր չոչափած հարցը լուծում են մերժողական տարբերակով, այսինքն՝ հոգեմարտները, մկրտչականները, մոլոկանները, ադվենտիստները, տոլստոյականները և ուրիշներ, կոչվում են ռացիոնալիստներ, այսինքն՝ մարդիկ, ովքեր ընդունում են այն, ինչ որ հիմնավորվում է բանականությամբ:

Ուստի, հետևողական լինելու և իրենք իրենց չհակասելու համար, աղանդավորները պետք է այս կամ այն բացատրությունը տան այն փաստարկներին, որոնք թելադրված են եղել մարդկային բանականությամբ:

Տեսնենք, ուրեմն, թե աղանդավորներն ի՛նչ կասեն քրիստոնեական եկեղեցական հեղինակների պարզ, անպաճուճ, միաժամանակ ուժեղ և դիպուկ դատողություններիի առնչությամբ, ովքեր իրենք էլ են հետաքրքրվել տվյալ հարցով և որի չուրջ աչխույժ և հետաքրքիր բանավեճ են ունեցել իրենց հակառակորդների հետ:

Եկեղեցու սուրբ հայրերի և ուսուցիչների մտածումները տվյալ հարցի վերաբերյալ այսպիսին են:

Սուրբ Գրիգոր Աստվածաբանը, այդ մեծ սխրագործը, սուր մտքի տեր և սուրբ կյանքով ապրած մի մարդ, իր հակառակորդներին այսպես էր պատասխանում առաջադրված հարցի կապակցությամբ.

«Այսպես դատի՛ր: Դու երկու մարդանի ունես, մեկը՝ ոսկյա, իսկ մյուսը՝ երկաթյա, և երկուսի վրա էլ փորագրված է միևնույն թագավորական կնիքը, և երկուսով էլ դու կնքել ես մեղրամոմը: Ինչո՞վ է մեկ կնիքը տարբերվում մյուսից: Ոչնչով: Ճանաչիր կնիքի՝ մեղրամոմի վրա թողած դրոշմը, և եթե դու իմասպուն ես մյուսներից, ուրեմն ասա՝ ո՞ր մարդանուն է՝ ոսկյա՞, թե երկաթյա: Քանզի չնայած որ նյութը տարբեր է, սակայն դրոշմների միջև տարբերություն չկա: Թող այդպես էլ քեզ մկրտողն ու խոստովանեցնողը լինի ցանկացած քահանա, քանզի չնայած մեկը մյուսին գերազանցում է իր կյանքով, սակայն մկրտության, (հավասարապես և մյուս խորհուրդների) ուժը միևնույնն է, ուստի քեզ դեպի կատարելություն կարող է առաջնորդել միևնույն հավատքով դաստիարակված ցանկացած քահանա»:

Մեր քննարկած հարցի չուրջ ճիշտ նույն մտքերն է արտահայտում նաև եկեղեցու այնպիսի նշանավոր հայր, ինչպիսին է Սուրբ Հովհան Ոսկեբերանը: Ահա նրա խոսքերը.

«Ապրվածային շնորհը գործում է նաև անարժանների միջոցով: Ապրված գործում էր նաև Բաղաամի՝ գարշելի մի մարդու միջոցով: Յույց էր տալիս ապագան և՛ Փարավոնին, և՛ Նաբուգոդոնոսորին: Կայիափան էլ էր մարգարեանում՝ ինքն իսկ չիմանալով, թե ի՞նչ էր ասում, և ուիշներ ևս Քրիստոսի անունով դևեր քշեցին, չնայած իրենք Քրիստոսի կողմնակիցները չէին, որովհետև այդ ամենը լինում է ոչ թե կատարողների, այլ ուրիշների համար»:

Մի ուրիշ տեղում էլ Ոսկեբերան հայրապետն ասում է.

«Կայենի հետ Ապրված խոսում էր հանուն Արեվլի, սատանայի հետ՝ հանուն Նոյի, Փարավոնի հետ՝ հանուն Յովսեփի, Նաբուգոդոնոսորի հետ՝ հանուն Դանիելի, հայտնություն ստացան նաև մոգերը: Պատահում է, որ իշխանավորները լինում են չար և անգուսպ, իսկ ենթակաները՝ բարի և զուսպ: Աշխարհականներն ապրում են աբստինի կյանքով, իսկ հոգևորականները՝ արատավոր: Եվ եթե շնորհը միշտ արժանավորներին փնտրեր, ապա չէր լինի ոչ մկրտություն և ոչ էլ Սուրբ Յաղորդություն: Բայց այժմ Ապրված գործում է նաև անարժանների միջոցով, և մկրտության շնորհն ամենևին էլ չի պուժում քահանայի վատ կյանքից, որը կկանգնի Ապծո Աիեղ դատաստանի առաջ, և Տերն Ինքը կդատի նրան՝ ըստ նրա գործերի: Սա ասում եմ, որպեսզի առաջիկայում որևէ մեկը, հետևելով քահանայի կյանքին, չկասկածի նրա կատարած խորհուրդների վավերականությանը: Մարդն իր կողմից ոչ մի բան չի դնում դրանց մեջ, այլ ամեն ինչ ապրվածային գորության արդյունքն է: Նա մեզ վրա ազդում է Սուրբ Խորհուրդներով»:

Սուրբ Յովհան Ոսկեբերանի տվյալ միտքն ավելի ուժգին և ցայտունորեն է արտահայտված նաև հետևյալ խոսքերի մեջ.

«Քեզ ի՞նչ է վերաբերում, թե քահանան պիղծ է և չար: Իսկ եթե արդարն ու առաքինին է քեզ համար Ապծուն աղոթում, ի՞նչ օգուտ, երբ դու ինքդ չար ես: Այնպես էլ քեզ անմաքուր քահանան չի վնասի, եթե դու ինքդ հավատարիմ ես Ապծուն և հաճոյ ես Նրան, քանզի ամեն շնորհ Ապծուց է: Քահանան միայն շուրթերն է բացում, իսկ ամեն ինչ ասում է Ապրված»:

Ինչ կարելի է ասել Եկեղեցու մեր նշանավոր հայրերի այստեսակ պարզ, անխարդախ դատողությունների դեմ: Որոշակիորեն ոչինչ: Մի՞թե խելամիտ է տրամաբանությանը հակառակ գնալ:

Մի՞թե կարելի է ըմբոստանալ առողջ դատողության դեմ: Մի՞թե կարելի է հակառակ գնալ պարզ, այբբենական ճշմարտությանը: Իհարկե չի կարելի: Դրա համար էլ աղանդավորներն այսպես համառորեն լռում են մեր սուրբ հայրերի փաստարկներին և դատողություններին ի պատասխան: Բերված փաստարկներին ո՛չ դեմ և ո՛չ էլ կողմ են խոսում: Եվ նրանց այդ մեռելային լռությունն ամենագեղեցիկ կերպով խոսում է նրանց կեղծ աղանդավորական ուսմունքի սնանկության մասին:

Այսպիսով, և՛ Սուրբ Գիրքը, և՛ սրբազան Քվանդուլյունը, և՛ առողջ մարդկային բանականությունը հավասարապես համոզիչ կերպով, վկայում են, որ Աստվածային կենարար չնորհը մարդկանց տրվում է նաև անարժան հովիվների միջոցով:

Այժմ մեր կողմից էլ մի քանի նմանատիպ օրինակներ բերենք՝ հօգուտ մեր կողմից ապացուցվող տեսակետի:

Դատավարության ժամանակ երբեք չեն նայում, թե դատավորը կյանքում լավ մարդ է, թե ոչ: Ջեն նայում, որովհետև յուրաքանչյուր դատավոր, ըստ իրեն տրված իշխանության, կարող է դատել, եթե նա անգամ ամենավատ ու անբարո մարդը լինի: Այդպես էլ յուրաքանչյուր քահանայ, չնայած իր անձնական կյանքին, կարող է իրեն ի վերուստ տրված չնորհի և իշխանության համաձայն արձակել կամ դատել մեղավորին: Ուրեմն, ինչպես սովորական դատավորին, այդպես էլ քահանային մենք չպետք է նայենք փորձող աչքով, այսինքն՝ դատելով, թե նա արդյոք կարո՞ղ է կապել և արձակել և փրկարար չնորհը փոխանցել Սուրբ Խորհուրդների միջոցով:

Եվս մեկ օրինակ:

Ոսկին որքան էլ որ ծածկված լինի կեղտով, իր արժեքը երբեք չի կորցնում: Նշանակում է, որ ձեռնադրության խորհրդի ժամանակ տրվող

չնորհը նույնպես երբեք չի կարող կորցնել իր ուժն ու նշանակությունը, իր հոգին ինչպիսի արատներով և անօրենություններով էլ որ ծանրացրած լինի սուրբը չնորհն ընդունած հովիվը:

Եվ վերջին օրինակը:

Հողագործը ցորենը միշտ ցանում է կեղտոտ, կոշտ ձեռքով, սակայն չնայած դրան, արտերը՝ Աստծո օրհնությամբ ծածկվում են առատ հունձքով: Այդպես էլ հովիվն է: Նա իր անձնական կյանքում կարող է լինել կոպիտ ու վատ մարդ, սակայն նրա հոգեխնամ առաքելության արդյունքները կարող են փրկարար, հրաշալի և նախանձելի լինել ուրիշների համար, բնականաբար միայն Աստծո օգնականությամբ:

Այսպիսի օրինակներ և համեմատական բացատրություններ ցանկության դեպքում կարելի էր գտնել որքան հնարավոր է, սակայն կարծում ենք, որ այսքանն էլ բավական է: Եվ այս համեմատությունները պարզից էլ առավել ցույց են տալիս չոշափված հարցի վերաբերյալ աղանդավորական կարծիքների անհիմն և սնանկ լինելը:

Այժմ անցնենք առաջ:

Մենք այն կարծիքին ենք, որ եթե նույնիսկ ո՛չ Սուրբ Գրքում և ո՛չ էլ սրբազան Ավանդությունում չխոսվեր հօգուտ մեր հաստատած կարծիքի, ապա, միևնույն է, անհնար կլիներ համաձայնել աղանդավորների հետ և ընդունել նրանց պաշտպանած տեսակետը:

Ինչո՞ւ: Որովհետև դրա պատճառով մենք հիմնովին հակասության մեջ կմտնեինք Նոր Կտակարանի, հետևաբար նաև Քրիստոս Փրկչի սուրբ կամքի հետ:

Փորձենք բացատրել մեր ասածը:

Աշխարհի Փրկիչն Իր աշակերտներին ու առաքյալներին, իսկ հանձին նրանց, իհարկե, նաև Եկեղեցու բոլոր հովիվներին իշխանություն է տվել «կապելու և արձակելու» մեղքերը: Նա ասել է.

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. 18:18):

Մի այլ տեղում. «Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Յովհ. 20:23):

Արդարացի՞ է արդյոք այսքանից հետո պնդել, որ քահանան չի կարող ներել մեղքերը, քանի որ ինքը նույնպես մեղավոր է: Եթե Աստված Ինքն է նրան այդպիսի իշխանություն տվել, ապա մարդիկ ինչպե՞ս կարող են այն վիճարկել: Մենք չպետք է նայենք, թե հովիվը արժանավոր է կամ անարժան, չէ՞ որ ինքը չէ արձակողը, այլ նրա միջոցով Աստված Ինքնէ գործում: Եթե այս ամենին նայենք այլ կերպ, օրինակի համար՝ աղանդավորների նման, ապա ընդհանրապես առանց ապաշխարության կմնանք: «Կապողներ և արձակողներ» չեն լինի, որովհետև Աստծո ճշմարիտ դատաստանի առջև մենք բոլորս մեղավոր ենք և անարժան:

Եվս մեկ անգամ կրկնում ենք. աստվածային շնորհը հավատացյալ մարդուն միշտ տրվում է նրա հավատքի չափով, նույնիսկ, անկախ այն բանից, խորհրդակատար հովիվն արժանա՛վոր է, թե՛ անարժան: Եվ եթե այդպես է, ապա ելնելով սուրբը ձեռնադրության հանդեպ ունեցած հարգանքից, պետք է նաև հարգել անարժան հովիվներին՝ օգտվելով նրանց չնորհատու քահանայագործությունից և Սուրբը խորհուրդներից: Այստեղ որևէ կասկած և այլընտրանք չի կարող լինել: Մարդն ինքը տկար է, սակայն նրա միջոցով տրվող աստվածային շնորհը մշտապես սուրբ է և մաքուր:

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ԺԳ

ՀՈՎՎԻ ՏԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԸ

Պատրաստվել է Մոսկվայի Սուրբ Տիխոնի անվան ուղղափառ համալսարանի կողմից

Թարգմանեց՝
Տ. Պարթև արեղա Բարսեղյանը
Խմբագիր՝ Տ. Տաճատ արեղա Ծատուրյան
Սրբագրիչ՝ Յուրա Հովհաննիսյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010